community

The New Apostolic Church around the world

01/2018/AM

2018 թվականի նշանաբանը՝

Հավատարմություն Քրիստոսին

Խմբագրական՝
Գլխավոր առաքյալը տարվա նշանաբանի վերաբերյալ

Ժամերգություն Չիկագոյում՝
Խնդրում եմ, գնա՛ :

Եկեղեցական ուսմունք՝
Էականը ննջեցյալների պարագայում

New Apostolic Church
International

Հավատարմություն Աստծուն

Լուսանկարը՝ ՆԱԵ միջազգային

Սիրելի հավատքի եղբայրներ և քույրեր,

նոր տարվա առիթով ես ձեզ ցանկանում եմ աստվածային օրհնանքի լիություն և Աստծո ներկայության բազում ապրումներ։ Գեղեցիկ ավանդույթ է տարվա սկզբին միմյանց ամենայն բարիք և ամենալավը ցանկանալը։ Սակայն, մենք կարող ենք նաև շատ բան անել միմյանց համար։ Մենք կարող ենք աղոթել և սիրելի Աստծուն ասել․„ Օրհնի՛ր իմ եղբորը։ Ուժեղացրու՛ իմ քրոջը։ Պաշտպանի՛ր և մխիթարի՛ր նրանց„։

Միմյանց համար աղոթելը մենք կարող ենք ամեն օր անել, ողջ տարին շարունակ։ Այս առումով ես մտածում եմ այն քույր-եղբայրների մասին, ովքեր ապրում են այն տարածաշրջաններում, որտեղ տիրում են պատերազմը, կարիքն ու ճնշումը։ Բայց և նրանց մասին, ովքեր մեծ ցավի մեջ են՝ լինի դա մարմնական, թե՝ հոգևոր։ Սիրելի քույր-եղբայրներ, վստա՛հ եղեք, որ ձեզ համար շատ է աղոթվելու։

Առաքյալներն աղոթում են հատկապես այն բանի համար, որ բոլորն իրավունք ունենան մեր հավատի նպատակին՝ Հիսուս Քրիստոսի գալստյանը, հասնելու։ Նոր տարում մենք պետք է մեզ նաև դրա համար նախապատրաստենք։ Եվ դրա համար մենք ունենք մեր ուսուցողական ծրագիրը՝ ամեն տարի փոփոխվող գլխավոր կետերով։

Այսպես, մենք արդեն զբաղվում ենք սիրո, ուրախության, հաղթանակի և գովաբանության թեմաներով։ Այս տարի ևս հարսնացուական համայնքի համար խոսքը գնում է մի կարևոր հատկության՝ Քրիստոսի հանդեպ հավատարմության մասին ։

Հարսնացուի բնութագրին, սիրո և ուրախության հետ մեկտեղ, պատկանում է նաև հավատարմությունը։ Այլ ձևով չի էլ լինի։ Իսկ ինչպե՞ս կարող ենք մենք ցույց տալ Քրիստոսի հանդեպ հավատարմությունը։ Այս առումով ես ցանկանում եմ չորս կետ նշել՝

- Հավատարմություն Քրիստոսին նշանակում է՝ հետևել նրա օրինակին։
- Հավատարմություն Քրիստոսին նշանակում է՝ սերը պահպանել նաև դժվար ժամանակներում։
- Հավատարմություն Քրիստոսին նշանակում է՝ ծառայել ցանկանալ։
- Հավատարմություն Քրիստոսին նշանակում է՝ մեր խոստումները պահել։

Սրանք ամենակարևոր կետերն են։ Ժամերգությունների ժամանակ մենք հասկանում ենք, թե դա մեզ համար ինչ անձնական նշանակություն ունի։

Հավատարմության թեման շատ բազմաբնույթ է։ Խոսքն այստեղ գնում է այն գլխավոր հասկացությունների մասին, ինչպիսիք են՝ ազնվությունը, վստահությունը, հաստատակամությունը և հուսալիությունը։ 2018-ին մենք պետք է եռանդուն զբաղվենք հավատարմության նշանակության բազմաթիվ մակարդակներով։

Ինչու՞։ Դա շատ պարզ է՝ Աստծուն հավատարիմ լինելը մեր հավատի հիմքն է։ Դա այնքան հիմունքային է, որ շատ լեզուներով Նոր կտակարանում այս երկու հասկացությունների համար՝ „ հավատ„ և „ հավատարմություն„ նույն բառն է օգտագործվում։

Այս իմաստով էլ ես ձեզ ցանկանում եմ հավատով ուժեղ 2018 թվական։ Եկե՛ք հավատարիմ մնանք Տիրոջը։

Ձեր՝ Ժան-Լյուք Շնայդեր

2017-ի հուլիսի 10-ին՝ շաբաթ օրը գլխավոր առաքյալ Ժան-Լյուք Շնայդերը ԱՄՆ-ի համայնքային եկեղեցիների սպասավոր եղբայրների հետ միասին ժամերգություն անցկացրեց Չիկագոյում

Լուսանկարները՝ pigprox – Fotolia.com



Լուսանկարը՝ ՆԱԵ ԱՄՆ

Խնդրում եմ, գնա :

Մատթեոս 28,19,20

,, Գնացեք ուրեմն աշակերտ դարձրեք բոլոր ազգերին, նրանց մկրտեցեք Հոր և Որդու և Սուրբ Հոգու անունով: Ուսուցանեցեք նրանց պահել այն բոլորը, ինչ որ ձեզ պատվիրեցի: Եվ ահա ես ձեզ հետ եմ բոլոր օրերում՝ մինչև աշխարհի վախճանը,,:

Իմ սրտանց սիրելի եղբայրներ ու քույրեր, սա առանձնահատուկ մի պահ է, նախ՝ որ ես այսօր կարողացել եմ ձեզ հետ լինել, և ամենից առաջ այն պատճառով, որ ամբողջ երկրից շատ եղբայրներ են միացել մեզ: Հաճախ չի այսպես լինում, և դրա համար էլ ցանկանում եմ առիթն օգտագործել և ձեզ մեր շնորհակալությունը հայտնել ձեր աշխատանքի համար, ձեր աջակցության և ծառայության համար: Ես դիտավորյալ ասացի ,, մեր շնորհակալությունը,,; քանի որ ես ուզում եմ լինել առաքյալների խոսնակը: Դուք գիտեք, որ մենք ապավինում ենք ձեր օգնությանը և աջակցությանը: Հիսուսն ուղարկել է աշակերտներին և մեր հավատն ու համոզմունքն այն է, որ նաև նորառաքելական եկեղեցու առաքյալներն են առաքված Հիսուսի

կողմից: Նա նրանց մի հզոր առաջադրանք է տվել, որը նրանք միայնակ չեն կարող իրականացնել: Մենք ձեր օգնության, ձեր աղոթքի կարիքն ունենք : Մենք կարիքն ունենք ձեր օժանդակության: Դրա համար էլ մենք այնքան շնորհակալ ենք ձեզ, որ դուք պատրաստ եք առաքյալների հետ միասին աշխատել Հիսուս Քրիստոսի համար:

Դուք, ձեր ձեռնադրության ժամանակ, ստանձնելով առաքելական լիազորության, ինչպես նաև առաքյալների առաջադրանքի մի մասը՝ Հիսուսին Այո եք ասել: Առաքյալը, որից դուք առաջադրանք եք ստացել, ձեզ տվել է իր լիազորության մի մասը: Դուք այդ առաջադրանքն իրականացնում եք ոչ միայն այնպես, ինչպես կատարում եք ձեր ֆիրմաների աշխատանքը, այլ՝ ամբողջ սրտով ու սիրով: Դա մասնագիտական աշխատանք չէ, որ դուք անում եք: Դա հավատի գործ է, սիրո գործ է, որը պահանջում է զոհաբերություն և աղոթք: Դրա համար մենք շնորհակալ ենք, որ դուք պատրաստ եք եղել այդ առաջադրանքը ստանձնելու: Որպես սպասավոր եղբայրներ՝ դուք առաջադրանք եք ստացել առաքյալից, ձեռնադրությամբ դուք ստացել եք առաքյալի լիազորության մի մասը: Դա նշանակում է, որ պաշտոնն ու պաշտոնի լիազորությունը միայն այն դեպքում են վավերական, ինչքան ժամանակ դուք կապված կլինեք առաքյալների ծառայության հետ և կգործեք առաքյալի առաջադրանքով: Դա նորառաքելական եկեղեցու հատկանիշներից է: Ոչ բոլոր եկեղեցիներում է այդպես: Շատ եկեղեցիներում այնպես է, որ մեկը, ով ստանձնում է մի պաշտոն, կարող է անել և թույլ տալ իրեն այն, ինչ ուզում է, անգամ, եթե համայնքը դրա հետ համաձայն չէ: Բայց, մեր եկեղեցում այդպես չէ: Սպասավոր եղբայրների, քարոզիչների, սարկավագների պաշտոնների լիազորությունը միայն այն դեպքում է վավերական, երբ նրանք գործում են առաքյալի առաջադրանքով:

Գնա՛: Ասա՛ մարդկանց: Համոզի՛ր նրանց: Մոտիվացրու՛ նրանց:

Երբեմն մեկն ունենում է մի գաղափար՝ օ, մենք կարող էինք սա անել, և դա գեղեցիկ կլիներ: Այստեղ ես արդեն պետք է եղբայրներին ասեմ՝ դա, հավանաբար լավ է, սակայն վստահ եղեք, թե արդյո՞ք այդ պահին գործում եք առաքյալի առաջադրանքով: Եթե այդպես չէ, ուրեմն՝ հեղինակության մի ձգտեք: Մեր եղբայրների իննսունինը տոկոսը գործում է այդպես և մենք շնորհակալ ենք նրանցից: Լավ, ԱՄՆ-ում դա կազմում է 100 տոկոս:

Ինչու՞ եմ ես դա նշում: Քանի որ դա կարևոր է: Մենք՝ բոլորս, գործում ենք մի որոշակի առաջադրանքով: Որպես սպասավոր եղբայրներ՝ դուք գործում եք ձեր առաքյալի առաջադրանքով, ով իր առաջադրանքը Հիսուսից է ստացել: Դրա համար էլ ես այսօր ընտրեցի այս խոսքը, քանի որ բոլոր սպասավոր եղբայրների՝ սարկավագների, քարոզիչների և առաքյալների համար կարևոր է գիտակցելը, որ դա մեր առաջադրանքն է: Դա առաքյալների առաջադրանքն է, և որի մի մասը ձեռնադրության ժամանակ նրանք փոխանցում են սպասավոր եղբայրներին: Ժամանակ առ ժամանակ հետաքրքիր կլինի այն մասին մտածել, թե ինչ է բովանդակում մեր առաջադրանքը: Հիսուսը շատ պարզ ասում է.,, Գնացե՛ք,,: Դա առաջադրանքի առաջին մասն է:

Եթե մեկը ձեռնադրվում է, ես պետք է այստեղ շեշտեմ, դա չի նշանակում, որ նա պաշտոն ունի: Դրանով նա պետ չի դառնում: Նա ստանում է աշխատանքի առաջադրանք: Դա կոչն է՝ Գնա՛: Դա նշանակում է նաև՝ Շարժվի՛ր: Դա նշանակում է, որ մենք, առաքյալներս, նաև բոլոր սպասավոր եղբայրները, ավելի խոր պետք է ներթափանցեն Հիսուս Քրիստոսի ուսմունքի մեջ: Մենք չենք կարող կանգնած մնալ այս նույն վիճակում և մտածել, թե մենք ամեն ինչ գիտենք, ամեն ինչ ունենք: Մենք պետք է խոր թափանցենք Քրիստոսի ուսմունքի մեջ և դրա համար մենք կարիք ունենք Սուրբ Հոգու առաջնորդության: Այդ ուղղորդմանը պետք է մենք հետևենք և գնանք դեպի մարդիկ:

Գնացե՛ք: Որպեսզի Ավետարանը ուրիշներին էլ տեղեկացվի, անհրաժեշտ է անձնական շփում: Հիսուսի այս կոչը չի վերաբերում որևէ կազմակերպության կամ ֆիրմայի: Այդ կոչն ուղղված է մեզնից յուրաքանչյուրին, առաքյալներին և նրանց հետ համագործակցողներին՝ Գնացե՛ք:

Մենք չենք կարող ասել, որ դա եկեղեցու գործն է: Եթե առիթը լիներ, մենք կարող էինք ասել, որ ներկայացնում ենք մի գործառույթ, որպեսզի Ավետարանն ու նորառաքելական հավատը ճանաչել տանք, մենք անում ենք ՓԻԱՌ- ակցիա և դա է ամբողջը: Սակայն, այդպես չի հնչում առաջադրանքը, այն հնչում է այսպես՝ ,,Գնացե՛ք,,: Հիսուսն ուզում էր, որ մենք անձնական շփումներ ունենանք մարդկանց հետ: Մենք չենք կարող աշակերտներ գրավել, եթե հավաքագրումը

հեռուստատեսությամբ կատարենք: Այդ անձնական շփումը առաջադրանքի մի մասն է, և դա մենք պետք է գիտակցենք: Գնացե՛ք: Մենք պետք է դեպի մարդիկ գնանք: Մենք պետք է նրանց հետ խոսենք, նրանց համոզենք, մոտիվացնենք: Դա եկեղեցին ու Աստծո գործը տարբերակում է ֆիրմայից: Մենք չպետք է գործենք որպես ֆիրմա:Մեր առաջադրանքն է՝ գնալ, խոսել մարդկանց՛ հետ և՛ անձնական շփումներ ստեղծել: Գնացե՛ք: Ինչու՞: Որպեսզի բոլոր ազգերին աշակերտ դարձնենք: Որևէ մեկին աշակերտ դարձնել, նշանակում է նրան քաջալերել՝ հետևելու Հիսուսին: Դա է առաջադրանքը: ,,Աշակերտ,, բնորոշումը հենց հետևորդի մասին է: Այսինքն՝ մարդկանց Հիսուսի աշակերտ դարձնելը, նշանակում է մոտիվացնել՝ նրան հետևելու: Դա ենթադրում է, որ մենք հավատում ենք այն բանին, որ Ավետարանը կարևոր է բոլոր մարդկանց համար՝ անկախ նրանից, թե ինչպիսի հարաբերություններում են նրանք ապրում, ինչպիսի մշակութային հիմքեր ունեն, ինչպիսին է նրանց տնտեսական իրավիճակը կամ նրանց անցյալը: Եվ այն էլ՝ Ավետարանն իր ամբողջությամբ: Մենք չենք կարող ոչ մի սահմանափակում անել և ասել, այո, պատվիրաններն անհրաժեշտ են բոլորին: Ով Աստծո կամքը չի կատարում, կպատժվի: Դա Ավետարանի միայն մեկ ասպեկտն է: Ավետարանն իր ամբողջությամբ կարևոր է բոլոր մարդկանց համար, իսկապես, երկրի վրա ապրող բոլոր մարդկանց համար: Եղբայրներ, մենք պետք է դրան հավատանք: Մենք պետք է բոլոր ժողովուրդների մոտ գնանք: Մեր հայրերը դա այսպես են հասկացել՝ մենք պետք է երկրի վրա գտնվող բոլոր պետությունները գնանք, որպեսզի մարդկանց վկայենք ու նրանց քարոզենք Ավետարանը ,և ճանաչել տանք նորառաքելական հավատը: Դրա համար մենք շնորհակալ ենք ձեզ և ձեզ է ուղղված մեր հարգանքը: Ես գիտեմ, ինչի մասին եմ խոսում այստեղ՝ Միացյալ Նահանգներում և Հյուսիսային Ամերիկայում: Հյուսիս-ամերիկյան եղբայրներն ու քույրերը մեծ աշխատանք են կատարել ուրախ լուրը աշխարհով մեկ տարածելու համար: Դա շատ կարևոր ասպեկտ է, բայց՝ միայն մեկ ասպեկտ:

Մարկոսի Ավետարանում այսպես է գրված.,, Գնացեք ամբողջ աշխարհով մեկ և քարոզեցեք Ավետարանը բոլոր մարդկանց,,/ Մարկոս 16,15/: Մենք պետք է ոչ միայն բոլոր երկրների քրիստոնյաների մոտ գնանք, այլ՝ մենք պետք է ամբողջ Ավետարանը ողջ բնակչությանը քարոզենք: Մենք պետք է բոլորի մոտ գնանք՝ անկախ նրանց հարաբերություններից, մշակույթից, տարիքից կամ հարուստ ու աղքատ լինելուց: Եվ հենց դա է իմ մտահոգությունը, երբ ես ամբողջ աշխարհի համայնքներին եմ հայացք գցում: Ես ինձ հարց եմ տալիս, թե արդյո՞ք մեր համայնքները բնակչության ընդհանուր պատկերն են արտացոլում: Դեռ ոչ: Մեր առաջադրանքն է՝ գնալ բոլոր ժողովուրդների և բոլոր բնակիչների մոտ՝ առանց բացառության: Սիրելի եղբայրներ, սրա շուրջ մենք պետք է մտածենք՝ գնալ դեպի ողջ բնակչությունը ; ,, բոլոր արարածները,,: Ո՞րն է մեր առաջադրանքը: Մենք պետք է նրանց աշակերտ դարձնենք և նրանց մոտիվացնենք՝ հետևելու Քրիստոսին: Մենք ոչինչ չպետք է նրանց խոստանանք: Այնքան հեշտ է աղքատների մոտ գնալը և նրանց խոստանալը, որ նրանք հարստանալու են, եթե հետևեն Քրիստոսին , և դեռ ավելին, եթե նրանք նորառաքելական դառնան: Մենք կարող էինք գնալ հիվանդների մոտ և ասել՝

եթե դուք հետևեք Քրիստոսին և առաքյալներին, կառողջանաք, կամ գնալ ճնշվածի մոտ և ասել՝ եթե Քրիստոսին հետևես, դու կազատվես: Սակայն, դա նրանց աշակերտ չի դարձնի: Շատ մարդիկ հետևել են Հիսուսին, քանի որ նրանք ակնկալել են հրաշքներ: Նրանք ցանկացել են փրկվել: Բայց, նրանք աշակերտներ չեն եղել, ինչպիսին կուզենար ունենալ Հիսուսը: Մյուսներն էլ Հիսուսից սպասել են, որ նա նրանց հարաբերությունները փոխի դեպի լավը և նրանք հռոմեական տիրապետության լծից ազատվեն: Դա տեղի չունեցավ: Նա ուզում էր աշակերտներ, ովքեր նրան կհետևեին սիրուց ելնելով, ովքեր նրան կվստահեին և պատրաստ կլինեին հանուն նրա ամեն ինչ թողնել: Իմաստ չունի մարդկանց հետ խոսել և նրանց խոստանալ օրհնանք, հարստություն, հաջողություն և փրկություն կարիքից: Դա անիմաստ է: Այսպես ոչ մի աշակերտ չես նվաճի:

Պատճառ էլ չկա մարդկանց պատժով, տխրությունով սպառնալու՝ եթե չեք հավատում, դուք էլ մյուսների հետ կտառապեք, իսկ մենք՝ կփրկվենք: Ոչ մի կարիք չկա նրանց սպառնալու:

Ինչպե՞ս կարող ենք մենք բոլոր ազգերին ,, աշակերտներ,, դարձնել: Մենք պետք է նրանց համար տեսանելի դարձնենք Քրիստոսի փառահեղությունը: Մենք պետք է Քրիստոսի սերը նրանց սրտերում սերմանենք: Մենք պետք է նրանց օգնենք ճանաչելու Հիսուսի մեծությունն ու փառահեղությունը: Հիսուսն Աստված է և Աստված Հիսուսն է: Նա հնազադ է: Նա սիրող է: Նա ողորմածություն է և համբերություն: Նա ամենազոր է, սակայն՝ այդքան հեզ: Նա բոլորին սիրում է հավասար սիրով: Նա սիրում է հարուստներին այնպես, ինչպես՝ աղքատներին: Նա սիրում է հզորներին այնպես, ինչպես՝ թույլերին: Ես կարող եմ ժամեր շարունակ այդ մասին քարոզել, բայց դուք այնպես լավ գիտեք, ինչպես՝ ես, որ մենք պետք է մարդկանց Հիսուս Քրիստոսի փառահեղության մասին պատմենք և այդ փառահեղությունը նրանց սրտերում սերմանենք, որպեսզի նրանք կարողանան սիրել Հիսուսին: Դրանից հետո նրանք կհետևեն նրան, քանի որ նրանք նրա սերը ճանաչած կլինեն և կիմանան, որ նա զոհաբերվել է իրենց համար: Հիսուս Քրիստոսն ուզում է ինձ փրկել, ես հետևում եմ նրան, քանի որ նա ինձ սիրում է և ես հավերժ նրա մոտ եմ լինելու, ես հետևում եմ նրան, քանի որ նա ինձ համար օրինակ է, ես ուզում եմ դառնալ նրա նման:

Ճշմարիտ մոտիվացիան Քրիստոսին հետևելն է: Եղբայրներ, մեր առաջադրանքն է գնալ բոլոր մարդկանց մոտ՝ անկախ նրանց հարաբերություններից, մշակույթից կամ սոցիալական կարգավիճակից: Գնացեք նրանց մոտ, շփվեք նրանց հետ և տեսանելի դարձրեք Աստծո փառահեղությունը: Հիսուսին հետևելու որոշումն արդեն իրենք ինքնուրույն կընդունեն, քանի որ նրանք հասկանում են՝ կարևոր է, որ ես լինեմ Հիսուսի մոտ, ես ուզում եմ նրան նման դառնալ: Նրանք ճշմարիտ աշակերտներն են:

Հետո մենք պետք է նրանց մկրտենք: Որպես քարոզչական սպասավորներ, դուք լիազորություն ունեք և առաջադրանք՝ մկրտություն նվիրաբերելու: Ապա դուք պետք է հոգիները նախապատրաստեք Սուրբ Հոգով կնքելու համար: Դա մի առանձնահատուկ առաջադրանք է: Սիրելի եղբայրներ, մենք պետք է պարզաբանենք, որ ջրով և Սուրբ Հոգով վերստին ծնվելը նախապայմանն է այն բանի, որ պատկանենք նրան, և եթե դա իրականանա, ամեն ինչ կագին է լինելու: Մենք պետք է պարզաբանենք, որ եթե ջրով և Սուրբ Հոգով մկրտվում են, ստանում են մի առանձնահատուկ ուժ: Ընդունում են մի ուժ, որը պետք է օգտագործել: Յուրաքանչյուրն ինքը պետք է կիրառի: Այդ ուժով կարելի է որոշակի բաներ անել, ինչպես օրինակ, սիրել Հիսուսին, ուրիշներին ներել, հետևել, փոխվել և Քրիստոսին նմանվել: Երբեմն ես մտահոգվում եմ՝ ես վստահ չեմ, թե ջրով մկրտության և Սուրբ Հոգով կնունքի նախապատրաստությունը բավար ներգործությամբ է անցկացվել: Մենք պետք է մարդկանց բացատրենք, թե ինչ ուժ է պատում Սուրբ Հոգով կնքվելուց հետո, և ինչ կարող են նրանք դրանով անել: Բացատրելու ամենալավ ձևը դա ցույց տալն է: Անցած շաբաթ ես նշեցի, որ մենք պետք է օրինակ լինենք, որպեսզի այն ուժը, որ ստանում ենք Սուրբ Հոգով կնքվելու ժամանակ, տեսանելի լինի: Մկրտեցեք նրանց ու բացատրեք, թե ինչ է նշանակում մկրտված լինելը: Ցույց տվեք մարդկանց, որ դա պատմության ավարտը չէ, այլ ընդամենը՝ սկիզբը: Նրանք ստանում են ուժ, որի կարիքը նրանք ունեն, որպեսզի Քրիստոսի էությամբ զարգանան: Դա մեր առաջադրանքի կարևոր մասն է.,, Դրա համար գնացեք և… մկրտեցեք նրանց…,,:

Մեր առաջադրանքը Հիսուս Քրիստոսի օրենքը ուսուցանելն է, ոչ թե՝ մեր սեփական օրենքը:

,, Ուսուցանեցեք նրանց պահել այն բոլորը, ինչ որ ձեզ պատվիրեցի,,: Մենք պետք է նրանց խթանենք՝ հետևել Քրիստոսին : Նրանք ճանաչել են նրան փառահեղությունը, նրա սերը, ողորմածությունն ու համբերությունը և որոշել են նրան հետևել սիրուց ելնելով, քանի որ նրա սերը իրենց համար մեծ է: Հիմա նրանք ուզում են նրան հետևել և նրան նմանվել: Հիմա, և հատկապես հիմա, մենք կարող ենք նրանց բացատրել, թե ինչպես նրանք կարող են հետևել Քրիստոսին: Կան ուշադրության արժանի մի քանի կանոններ, Քրիստոսի օրենքը: Նրանց դա բացատրելը այլևս խնդիր չէ, քանի որ նրանք այլևս պատժի վախից չեն գործում: Ոչ, հիմա նրանք սիրում են Հիսուս Քրիստոսին, և մենք կարող ենք նրանց ասել՝ եթե դուք ուզում եք նրան բարեհաճ լինել, ապա արեք այս և այս, բայց այն մեկը՝ մի արեք: Եվ սիրուց ելնելով նրանք դա կանեն: Ինչը սիրուց ելնելով են անում՝ խնդիր չէ նրանց համար:

Գիտեք, երբեմն մենք անում ենք ճիշտ հակառակը: Երբեմն մենք մարդկանց ամենսկզբում ասում ենք.,, Մի արա դա, եթե անես, դժոխք կգնաս, իսկ եթե սա անես, կօրհնվես:,,: Դա մենք պետք է թողնենք: Նրանք պետք է ամենսկզբից Հիսուսին սիրեն: Եվ, եթե նրանք նրան սիրեն, կարելի է նրանց ասել, թե ինչպես պետք է նրան հետևեն: Այդ դեպքում ոչ մի խնդիր նրանց համար այլևս չի լինի: Մենք պետք է նախ նրանց ուսուցանենք, քանի որ Հիսուսն այդպես է պատվիրել մեզ: Դա, ընդհանուր առմամբ, շատ չէ: Հեշտ չէ, մեզ համար դա մի մեծ մարտահրավեր է: Սակայն դա բազմաթիվ կանոններով գրացուցակ չէ: Մեր առաջադրանքը պետք է լինի Քրիստոսի օրենքը ուսուցանելը, ոչ թե՝ մեր սեփական օրենքներն ու կանոնները կամ ավանդույթները: Եվ մենք պետք է ավելի շատ այն բանի վրա ուշադրություն դարձնենք, որ մեր քարոզը կողմնորոշված լինի միայն Ավետարանով, այն ամենով, ինչ Հիսուսն ու առաքյալները, որ նշված է Աստվածաշնչում, ասել են: Ամեն ինչ վերաբերում է փրկությանը: Մենք պետք է կենտրոնանանք փրկության անհրաժեշտության վրա, ոչ թե՝ ինչ որ այլ կանոնների: Դուք գիտեք, թե ես ինչ նկատի ունեմ; Այդ ամենը մեր կրած պաշտոնի հետ ոչ մի կապ չունի: Դա նաև փրկության հետ ոչ մի կապ չունի: Մենք չենք կարող ասել՝ մենք գործում ենք մեր պաշտոնի առաջադրանքով: Դա անմտություն է, քանի որ այն պարզորեն որոշված է: ,, Ուսուցանեցեք նրանց պահել այն բոլորը, ինչ որ ձեզ պատվիրեցի,,. ասում է Հիսուսը, ոչ թե այն, ինչ դուք եք ճիշտ համարում: Մենք նրանց տեղեկացնում ենք նրա Ավետարանը: Քրիստոսին հետևելը չի նշանակում նույնաձևություն: Դա մենք պետք է գիտակցենք: Ինչպես սկզբում ես ասացի, մենք պետք է հավատանք այն բանին, որ Ավետարանը համընդհանուր կարևորություն ունի՝ անկախ հարաբերություններից, ծագումից, մշակութային հիմադրույթներից և սոցիալական կարգավիճակից: Կարելի է Քրիստոսին հետևել, եթե աղքատ են: Կարելի է Քրիստոսին հետևել, եթե հարուստ են: Կարելի է նրան հետևել, եթե հիվանդ կամ առողջ են: Կարելի է նրան նաև հետևել, եթե ծեր կամ երիտասարդ են: Անկախ նրանից, թե ինչ հարաբերություններում են ապրում,

կարելի է միշտ էլ Քրիստոսին հետևել: Եվ դա մենք ավելի ու ավելի պետք է գիտակցենք: Մենք չենք կարող մարդկանցից պահանջել, որ նրանք դառնան այնպիսին, ինչպիսին մենք ենք, քանի որ մենք այն կարծիքին ենք, որը կունենա միայն Քրիստոսի ճշմարիտ հետևորդը: Մենք պետք է նրանց ուսուցանենք, որ Քրիստոսի Ավետարանով ապրեն և իրենց հարաբերություններում դրանով գործեն: Նրանք չպետք է փոխվեն, և մենք չպետք է նրա համար մտահոգվենք, որ նրանք հարստանան, որպեսզի կարողանան Քրիստոսին հետևել: Դա բնավ մեր առաջադրանքը չէ: Անշուշտ, մենք ցանկանում ենք, որ աղքատների վիճակը լավանա, որ հիվանդները առողջանան: Բայց դա կապ չունի Հիսուսի առաջադրանքի հետ՝,, Ուսուցանեցեք նրանց պահել այն բոլորը, ինչ որ ձեզ պատվիրեցի,,: Դա, միանշանակ, բոլորովին այլ բան է:

Սիրելի եղբայրներ, ապագայի մեր առաջադրանք է լինելու գնալ բոլոր մարդկանց մոտ և նրանց քաջալերել հետևելու Քրիստոսին՝ առանց նրանց որևէ խոստում տալու: Մենք պետք է նրանց միայն Հիսուսի փառահեղության և սիրո մասին պարզաբանումներ անենք: Իսկ դրա համար անհրաժեշտ է անձնական շփումը: Եթե մարդիկ Հիսուսին սիրեն, մենք կարող ենք նվիրաբերել սուրբ մկրտությունը: Հետո կարող ենք նրանց նախապատրաստել Սուրբ Հոգով կնունքի համար: Մենք կարող ենք նրանց բացատրել, թե ինչ ուժ են նրանք դրանով ստանալու և ինչպես կարող են այդ ուժը կիրառել; Մենք պետք է նրանց ուսուցանենք, թե ինչպես կարող են հետևել Քրիստոսին և նրանց բացատրել, որ նրանք դա նաև իրենց իրավիճակում կարող են անել: Փառք Աստծո, նրանք ստիպված չեն ֆրանսիացի դառնալ, որպեսզի հավատացյալ դառնան: Նրանք ստիպված չեն հագնվել այնպես, ինչպես՝ ես կամ ուտել այն , ինչ ես եմ ուտում: Նրանք ստիպված չեն սիրել այն երաժշտությունը, որն ինձ է դուր գալիս: Ես կարծում եմ, որ դուք հասկացաք, թե ես ինչ նկատի ունեմ: Դուք պետք է հարգեք այդ մարդկանց:

Դա կարևոր է, երբ խոսքը վերաբերում է երիտասարդ սերնդին: Թույլ տվեք, որ նրանք իրենց երիտասարդ ժամանակները վայելեն այն երկրում և աշխարհում, որում ապրում են: Նրանք չպետք է դառնան այնպիսին, ինչպիսին մենք ենք եղել կամ կանք: Նրանք պետք է մնան երիտասարդ մարդիկ, ինչպիսին որ են: Նրանք ապրում են իրենց աշխարհում և իրենց ժամանակաշրջանում: Սակայն իրենց աշխարհում և իրենց ժամանակաշրջանում էլ նրանք կարող են հետևել Քրիստոսին: Դրա մասին մենք պետք է մտածենք՝դա հեշտ չէ: Ես գիտեմ, թե ինչի մասին եմ խոսում: Դա մեզնից ինչ-որ բան է պահանջում: Բայց դա Աստծո կամքն է, դա պատկանում է առաքյալների ծառայության առաջադրանքին, որին մենք բոլորս ներգրավված ենք: ,, Ուսուցանեցեք նրանց պահել այն բոլորը, ինչ որ ձեզ պատվիրեցի,,: Դա ենք ուսուցանում, երբ քարոզում ենք: Բայց երբեմն, սիրելի եղբայրներ, մեր ուսմունքը կազմված է լինում մեր օրինակից: Դա է պատճառը, որ մենք ստիպված ենք լինում անցնել տխրության միջով, երբ մեր հավատը քննվում է, երբ մենք պետք է մեր խաչը կրենք: Մտածեք այդ մասին, դա Աստծո պատիժ չէ: Դա նշան չէ այն բանի, որ Աստված այլևս չի հետաքրքրվում մեզնով կամ, որ մենք լավ աշխատանք չենք տարել, և նա դրա համար մեզ չի օրհնում: Ինչպես Աստծո բոլոր զավակները և մնացած այլ մարդիկ, մենք էլ ենք հանդիպում տխրության: Սակայն, երբ մենք անցնում ենք տխրության միջով, երբ մենք քննվում ենք, երբ մենք մեր խաչն ենք կրում, Աստված մեզնից մի քիչ ավելին է ուզում: Նա ուզում է, որ այդ իրավիճակում էլ մենք օրինակ լինենք և ապրենք այն, ինչ նա մեզ է պատվիրել: Չհուսահատվեք, չբարկանաք, եթե ձեր կյանքում ինչ-որ բան պատահի: Օրինակի համար, ուսուցանելը ևս պատկանում է մեր առաջադրանքին: Բայց, երբ մենք ցանկություն ենք հայտնում՝ երկնային Հայր, ես ուզում եմ իմ առաջադրանքն իրականացնել, որը դու ես ինձ տվել, նաև այս առանձնահատուկ իրավիճակում ուզում եմ օրինակ լինել այն բանի, ինչը դու մեզ պատվիրել ես - ես ձեզ ասում եմ, եղբայրներ, դուք կապրեք Հիսուսի խոստումը՝ ,, Եվ ահա ես ձեզ հետ եմ բոլոր օրերում՝ մինչև աշխարհի վախճանը,,: Հատկապես այդպիսի իրավիճակներում դուք ապրելու եք այն, որ Աստված ձեզ առանձնահատուկ ձևով օրհնում է: Ամեն:

Հիմնական մտքեր

Մենք գնում ենք դեպի բոլոր մարդիկ, որպեսզի Աստծո փառահեղությունը նրանց մոտեցնենք և նրանց խթանենք՝ նրան հետևելու: Մենք ուսուցանում ենք նրանց այն, ինչը նրանց փրկության համար անժխտելի է՝ առանց նրանցից պահանջելու դառնալ այնպիսին, ինչպիսին մենք ենք:

Հետևել Հիսուսի օրինակին

Որոշիչը հավատն է Հիսուսի զոհաբերության և նրա սիրո հանդեպ: Սակայն, նրա սիրուն պատասխանելը և բարի գործեր անելը դեռ թզերով հեռու է: Գլխավոր առաքյալ Ժան-Լյուք Շնայդերը յոթ օրինակ նշեց հավատն ու գործը համադրելու համար:

2017-ի օգոստոսի 20-ին գլխավոր առաքյալ Շնայդերը Սաուրիմոյում / Անգոլա /Մագուեիրաս

ստադիոնում 3200 հավատացյալ եղբայրների և քույրերի հետ ժամերգություն անցկացրեց:

Աստծո ողորմածությունը Հիսուս Քրիստոսի կյանքով և զոհաբերությամբ ճանաչելի դարձավ,- այսպես արտահայտվեց գլխավոր առաքյալ Շնայդերը: Հիսուս Քրիստոսը երկիր եկավ և իր կյանքը որպես զոհաբերություն տվեց, որպեսզի մարդկանց ազատի չարից, ժառանգական մեղքը լվանա և մեղքերը ների: ,, Նրա օրինակով և նրա ուսմունքով մենք սովորում ենք վարել աստվածահաճո կյանք և նախապատրաստվում ենք Քրիստոսի գալստյանը,,- այսպես ասաց եկեղեցու միջազգային ղեկավարը:

Քրիստոնեական կյանքի համար նախաձեռնությունները 21-րդ դարում՝:

1. Մենք մերժում ենք չարը: ,,Եթե մենք տեսնում ենք Հիսուս Քրիստոսի տառապանքներն ու մահը, կարող ենք չարի ընդհանրական էությունը ճանաչել: Հիսուսն ապրել է ատելության արդյունքը, նա ստիպված էր տառապել ճնշման ներքո, նա տառապում էր անարդարության պատճառով: Մարդիկ կաշառակեր էին, ստում էին և կեղծավորություն անում,,: Նման իշխանության ստրուկներ մենք չենք ուզում լինել,- այդպես ասաց գլխավոր առաքյալ Շնայդերը:

2. Մենք գործում ենք Ավետարանի համաձայն:: ,,Հիսուսը զոհաբերվել է, որպեսզի մեզ ազատի մեղքից: Ինչու՞ նա դա արեց: Քանի որ նա մեզ սիրում է: - Մենք մեր կյանքը ձևավորում ենք նրա խոսքի համաձայն, նրա Ավետարանի համաձայն: Մենք պահում ենք նրա խոսքը ոչ թե նրա համար, որ մենք վախենում ենք նրա պատժից, և ոչ նրա համար, որ ուզում ենք ինչ-որ բան վաստակել, այլ՝ որովհետև մենք ճանաչել ենք Հիսուսի սերը, և կատարում ենք նրա խոսքը,,:

3. Մենք հետևում ենք Հիսուսին:: ,,Հիսուսն ուզում է, որ մենք նրա մոտ լինենք: Եվ, քանի որ մենք նրան սիրում ենք, ուզում մենք նրա մոտ լինել: Մենք միշտ

Լուսանկարը՝ ՆԱԵ Անգոլա

նրա հետ միասնություն ենք փնտրում: Դա մենք անում ենք ժամերգության ժամանակ- մենք նրա հետ միասնություն ենք փնտրում Սուրբ Հաղորդության ժամանակ- և մենք ձգտում ենք նրա հետ հավերժ միասնության երկնքում,,:

4. Մենք ապացուցում ենք մեր հնազանդությունը և ապաշխարում ենք: ,,Տեր Հիսուսը կարողացավ հաղթել մեղքին և մահին, քանի որ նա բացարձակ անմեղ էր: Նա կարողացավ ընդունել հարության մարմին և կրկին վերադառնալ Հոր մոտ: Մենք էլ ենք ուզում այնտեղ գնալ՝ Աստծո թագավորություն, Հոր և Որդու մոտ: Բայց մենք նկատում ենք, որ չենք կարող անսխալական լինել: Մենք ամբողջովին գտնվում ենքողորմածության ներքո: Դրա համար էլ մենք հնազանդ ենք Աստծո առաջ, ապաշխարում ենք և զղջում,,:

5. Մենք ներում ենք մեր մերձավորին:: ,,Մենք կարիք ունենք մեր մեղքերի քավության: Եվ Տեր Հիսուսը իր ողորմածությունը նվիրում է հնազանդներին: Նա ներում է մեզ, մեր մեղքերը:-Ինչպե՞ս կարող ենք մենք շնորհակալություն հայտնել Տիրոջը իր ողորմածության համար, որը նա մեզ է նվիրում: Մենք ներում ենք մեր մերձավորին, ինչպես Տերն է մեզ ներում: Մենք ներում ենք մեր մերձավորին ողորմածության համար շնորհակալությունից ելնելով, որը Աստված մեզ է տվել,,:

6. Մենք հաղթահարում ենք փորձությունները: ,,Աստծո Որդին երկնքում էր, և նա ուզում էր մեզ փրկել: Դրա համար նա մարդացավ և երկիր եկավ: Նա անում էր այն ամենը, ինչ մարդիկ պետք է անեին: Մարդիկ ստիպված էին տառապել անարդարությունից, նա ևս այդպես էր անում: Մարդիկ տառապում էին իրենց տանջանքներից, նա էլ էր տառապում: Մարդիկ խաբեության էին ենթարկվում, նա էլ էր խաբվում: Մարդիկ ստիպված մահանում էին, նա էլ որպես մարդ մահացավ: - Քանի որ մենք սիրում ենք Հիսուսին, մենք պատրաստ ենք նրա համար և նրա հետ տառապել: Մենք ընդունում ենք, որ մենք ստիպված ենք անցնելու փորձությունների միջով: Մենք հրաժարվում ենք շատ բաներից, քանի որ մենք հետևում ենք Հիսուս Քրիստոսին,,:

7. Մենք Քրիստոսի վկաներն ենք: ,,Հիսուս Քրիստոսը զոհաբերվեց բոլոր մարդկանց համար: Մեր ցանկությունն է, որ ինչքան հնարավոր է ավելի շատ մարդիկ կարողանան այդ զոհաբերության արդյունքը և փրկությունը վայելել : Դրա համար էլ մենք նվիրվել ենք Տիրոջը ծառայելուն: Մենք պետք է մերձավորին Ավետարանից վկայություններ բերենք: Մենք պետք է առօրյա կյանքում Հիսուս Քրիստոսի ճշմարիտ վկաները լինենք,,:

աջում՝ առաքյալներ Մանուել Քվեֆասսե Մուփիլան և Քափոթե Մարկոս Միսսելոն ընդունում են ննջեցյալների համար Սուրբ Հաղորդությունը

Հիմնական մտքեր

Տիտոսին 2,14՝

,, … որ իր անձը տվեց մեզ համար, որպեսզի մեզ փրկի ամեն անօրենությունից և մաքրի որպես իրեն սեփական ժողովուրդ՝ նախանձախնդիր բարի գործերի,,:

Հիսուսի զոհաբերությունն ու ուսմունքը հնարավորություն են տալիս հավատացյալներին չարը մերժել, աստվածահաճո կյանք վարել և Քրիստոսի գալստյանը նախապատրաստվել:

Ավստրալիան շրջանային առաքյալի նոր օգնականով

Սեպտեմբերի վերջից Ավստրալիայում շրջանային առաքյալի գործունեության ոլորտում Փեթեր Շուլթեն երկրորդ մարդն է: Գլխավոր առաքյալ Ժան-Լյուք Շնայդերը նրան նախ ձեռնադրեց առաքյալ և անմիջապես հետո նշանակեց շրջանային առաքյալի օգնական մի հսկայան աշխատանքային ոլորտում:

Լուսանկարը՝ ՆԱԵ Ավստրալիա

2017-ի սեպտեմբերի 24-ի ժամերգության ժամանակ Մելբուրնում / Ավստրալիա/ գլխավոր առաքյալը մինչ այդ պահը շրջանային ավագ Փեթեր Շուլթեին ձեռնադրեց առաքյալ և նրան նշանակեց շրջանային առաքյալի օգնական:

,,Սա մի կարևոր քայլ էր, որը մենք միասին կատարեցինք,,: Այս խոսքերով բացման իր ելույթը սկսեց եկեղեցու գլխավոր ղեկավարը՝ դիմելով Փեթեր Շուլթեին, ով մի քանի տարի իր վրա էր վերցրել շրջանային ավագի սպասավորության պատասխանատվությունը Ավստրալիայի արևելքում: Նա շատ հստակ գիտի, թե նման պահերին ինչպիսի զգացողություններ են լինում,- ասում է գլխավոր առաքյալը:

14 տարի առաջ նա որպես շրջանային ավագ կանչվեց զոհասեղանի մոտ, որպեսզի սկզբից ընդունի առաքյալի սպասավորությունը և այնուհետև այն առաջադրանքը, որ նա օգնելու իր շրջանային առաքյալին՝ որպես նրա օգնական: ,, Ես կարող եմ նաև խոսքերով մխիթարել՝ մի վախեցիր, Աստված քեզ հետ է,,: Նա զգալու է Աստծո ուժը և ամբողջ երկրի հավատացյալ քույր-եղբայրների աղոթքները,- վստահեցրեց նրան եկեղեցու ղեկավարը:

Նախ՝ սիրել, հետո՝ ղեկավարել

Որպես առաքյալ և շրջանային առաքյալի օգնական՝ նա նախ պետք է ծանոթանա իր եղբայրների ու քույրերի հետ և նրանց սիրով վերաբերվի: ,, Եվ դու պետք է սովորես եկեղեցին և աշխարհի այս մասի համայնքները առաջնորդելը,,: Դա այն առումով հեշտ կլինի, որ նա ունի շրջանային առաքյալ, ում նա վստահում է և ումից կարող է օրինակ վերցնել:

Հավատքի մարդ

Փեթեր Շուլթեն /* 1963 / ապրում է Սարինայում / Քվինլանդում: Որպես շրջանային առաքյալի օգնական նա կշարժվի այսօրվա շրջանային առաքյալի ուղիղ հետագծով: ,, Ես շատ շնորհակալ եմ, որ կյանքում բոլոր փորձությունների ժամանակ ես Աստծո ուղեկցումն ապրելու իրավունքն եմ ունենում,- ասաց սպասավոր Անդերսենը,-այդպես է նաև հիմա, այս փոփոխության համար երկար է աղոթք հնչեցվել, և այն գտնվում է Տիրոջ օրհնանքի ներքո,,: Փեթեր Շուլթեն հավատքի և մեծ ուժի տեր մարդ է,- իր հետևորդին նկարագրեց շրջանային առաքյալը: Նա ղեկավարելու է մի մեծ մարզ և դա անելու է իրեն սովոր հանգիստ ու շրջահայաց ձևով: Նա ինքն էլ իրեն ցանկանում է սահուն անցում:

ԴԱՎԻԹՆ ՈՒ ԳՈՂԻԱԹԸ

/1. ՍԱՄՈՒԵԼ 17/

Այլազգիներն իրենց զորքը հավաքեցին, որ պատերազմեն: Սավուղն ու իսրայելացիները նույնպես համախմբվեցին: Այլազգիները լեռան այն կողմում էին, իսկ իսրայելացիները լեռան այս կողմում էին, նրանց միջև հովիտ կար:

Այլազգիների շարքերից մի հսկա առաջ եկավ, նրա անունը Գողիաթ էր և մոտ երեք մետր հասակ ուներ: Նրա գլխին կար բրոնզյա սաղավարտ, նրա ծանր լանջապանակն էլ էր բրոնզե, բրոնզե սռնապանները պաշտպանում էին նրա ոտքերը, իսկ նրա թիկունքին երկաթե սայրով տեգ կար : Զինակիրներից մեկը նրա առջևից էր գնում:
Գողիաթը կանգնեց Իսրայելի զորքի առաջ և պահանջեց մենամարտ. ,, Եթե ձեզնից մեկը ինձ հաղթի, ապա մենք՝ այլազգիներս, կլինենք ձեր ծառաները: Սակայն, եթե ես հաղթեմ, ապա դուք մեզ կծառայեք,,: Քառասուն օր շարունակ նա այդպես հեգնում էր իսրայելացիներին:
Թագավոր Սավուղն ու ժողովուրդը վախենում են Գողիաթից: Ոչ ոք չի ցանկանում Գողիաթի դեմ դուրս գալ: Դավթի երեք ավագ եղբայրներն էլ էին պատկանում իսրայելացիների զորքին: Հայրն արդեն շատ ծեր է, որպեսզի կռվի: Նա ճամբար է ուղարկում իր կրտսեր որդուն՝ Դավթին: Նա պետք է իր եղբայրներին բոված ընդեղեն և հաց տաներ: Նա Դավթին թարմ պանիր է տալիս հրամանատարի համար տանելու:
Երբ Դավիթը գալիս է իսրայելացիների ճամբար, զորքը պատրաստվում էր կռվի: Դավիթը վազում է զորքի մոտ, որպեսզի տեսնի իր եղբայրներին: Մինչ նա խոսում էր նրանց հետ, Գողիաթը նորից է կանգնում իսրայելացիների բանակի առաջ և պահանջում մենամարտ:
Դավիթը հարցնում է. ,, Ո՞վ է այս այլազգին, որ կենդանի Աստծո զորքին է հեգնում,,: Տղամարդիկ բացատրում են նրան, և Դավիթը տեղեկանում է, որ թագավոր Սավուղը խոստացել է, որ ով հաղթի Գողիաթին, նրան հարուստ կդարձնի և իր դստերը նրան կնության կտա:
Ավագ եղբայրը բարկանում է Դավթի վրա, որ նա զոռոզանում է, թե կարող է հաղթել հսկային: Թագավոր Սավուղն ասում է Դավթին.,, Դու չես կարող այս այլազգի հսկայի դեմ պայքարել, քանի որ դու շատ երիտասարդ ես,

իսկ նա՝ փորձված մարտիկ,,:
Բայց Դավիթը պատասխանում է Սավուղին. ,, Ես հովվում եմ իմ հոր ոչխարները, և եթե մի առյուծ կամ մի արջ է գալիս, որպեսզի ոչխար գողանա, ես փրկում եմ նրան և սպանում եմ առյուծին կամ արջին: Աստված ինձ օգնում է առյուծների և արջերի դեմ կռվելիս: Նա ինձ կօգնի նմանապես այս այլազգի զինվորի դեմ կռվելիս, քանի որ Գողիաթը հեգնում է կենդանի Աստծո բանակին,,:
Թագավորը տեսնում է, որ միայն Դավիթն է բավար քաջություն ցուցաբերում, որ Գողիաթի դեմ կռվի: Նա ուզում է Դավթին գոնե իր զրահը, իր սաղավարտն ու լանջապանակը տալ: Դավիթն իր վրա է կրում սավուղի զրահը և սուրը, ու ջանք թափում դրանով գնալ, բայց իզուր:
Նա չի կարողանում այդպես վազել, ուստի բոլորը վրայից նորից հանում է: Նա վերցնում է իր հովվական ձեռնափայտը և առվից փնտրում գտնում է հինգ ողորկ քար, որը դնում է իր հովվական պայուսակում:
Ձեռքն է վերցնում իր պարսատիկը և գնում Գողիաթի դեմ:
,, Ես շու՞ն եմ, որ դու փայտով ես ինձ մոտ գալիս,,: Գողիաթը նզովում է Դավթին և Աստծուն:
,, Դու ինձ մոտ ես գալիս սրով, տեգով ու նիզակով, բայց ես քեզ մոտ եմ գալիս Աստծո

Քրիստոսի ծննդից մոտ 1200 տարի առաջ այլազգիները Բալկանյան շրջաններից/ Հունաստան /միջերկրածովյան Կրետե կղզով եկան Քանան: Նրանք բնակություն հաստատեցին հարավ-արևմտյան ափին, գրեթե այն ժամանակ, երբ նաև իսրայելացիներն էին Քանանում բնակվում: Երկար ժամանակ իսրայելացիները տառապում էին այդ այլազգիների լծի տակ, քանի որ նրանք բարձրահասակ էին և գիտեին երկաթի մշակման գաղտնիքները: Նրանք ստեղծում էին ծանր լանջապանակներ, վահաններ, ուժեղ խոցող զենքեր, քան՝ իրենց հակառակորդները:
Պաղեստին երկիրը իր անունը ստացել է Պալեստինա / լատինական պհիլիստեա / անունից:

անունով, որին դու ծաղրում ես: Ես հաղթելու եմ քեզ, որպեսզի բոլոր մարդիկ տեսնեն, որ Իսրայելն Աստված ունի,,. գոչեց Դավիթը Գողիաթին: Երկուսն էլ մոտեցան իրար: Դավիթը ձեռքը տարավ հովվի պայուսակը և մի քար հանեց դուրս: Նա դրեց պարսատիկի մեջ և խփեց Գողիաթի ճակատին:
Հսկան ցած ընկավ:
Հետո Դավիթը վերցրեց այլազգիի սուրը և հարվածեց նրա գլխին:
Երբ այլազգիները տեսնում են, որ իրենցից ամենաուժեղը մեռավ, փախչում են:



Աղբյուրը՝ Ամսագիր՝ Մենք՝ երեխաներս, հրատարակչություն 09/2017, ձևավորումը՝ Միրելլա Ֆորթունատո

ՀՈՒԻԹԵԱՅԻ ՄՈՏ՝ ԹԱՈՒԹԻՐԱՅՈՒՄ / ՖՐԱՆՍԻԱԿԱՆ- ՊՈԼԻՆԵԶԻԱ/

,, Իո ռանա,, / ողջու՛յն/ բոլոր երեխաներին: Իմ անունը Հուիթեա է, ես տասը տարեկան եմ և ապրում եմ Թաութիրայում, Թահիթիի փոքրիկ գյուղերից մեկում, դա Խաղաղ օվկիանոսի հարավային մասում գտնվող մի կղզի է:

Շատ մարդիկ են արդեն լսել Թահիթիի մասին, շատերը երազում են գոնե մեկ անգամ այստեղ գալ: Թահիթին իսկապես շատ գեղեցիկ է: Ամբողջ տարին այստեղ տաք է և այստեղ կարելի է լավ ապրել:Արևադարձային կլիմայում աճում են բացառիկ պտուղներ, ինչպես օրինակ, ռաբութանը, որը լիչիի մի տեսակ է:

Բացի դրանից, այստեղ աճում են բազմատեսակ ծաղիկներ, շատ հայտնի է թիարեն, որից մոնոյի են ստանում: Դա յուղ է, որն օգտագործում են գեղեցիկ մազեր ունենալու համար և որը լավ միջոց է արևայրուքի դեմ : Այդ ծաղիկները հյուրերին հանձնելով ենք բարի գալուստ մաղթում:

Իհարկե, ծաղիկներ ծաղկում են ամենուր: Մեր համայնքի զոհասեղանը զարդարելու համար մենք երբեք ծաղիկներ չենք գնում, մենք դրանք պարզապես քաղում ենք:

Մեր համայնքում շատ երեխաներ կան: Ես հաճույքով եմ գնում եկեղեցի և հաճախ եմ հոգ տանում փոքրիկ երեխաների համար:



Տարվա մեջ բազմաթիվ անգամներ մեզ այցելում են սպասավոր եղբայրները, ովքեր գալիս են Ֆրանսիայից կամ Նոր Կալեդոնիայից, որը գտնվում է Թահիթիից դեպի արևելք 5000 կիլոմետր հեռավորության վրա:Սպասավոր եղբայրը դուրս է գալիս այնտեղից շաբաթ առավոտյան և մեզ մոտ է լինում ուրբաթ երեկոյան: Նա կարծես ետ է ճանապարհորդում ժամանակի միջով, քանի որ նա հատում անցնում է ամիս- ամսաթվի սահմանը, որը կա Նոր Կալեդոնիայի և Թահիթիի միջև: Այս ձևով կարելի է երկու անգամ ծնունդ տոնել:

Իմ ընտանիքը բաղկացած է իմ ծնողներից, իմ երկու ավագ եղբայրներից՝ Հուիթուա և Հուիմանա անուններով / նկարում՝ քույր Մարի Ռոզիի՝ մեր շրջանային ավետարանչի կնոջ կողքին/ և ինձնից:

Մայրս, ես՝ համայնքից փոքրիկ երեխայի հետ և իմ մորաքույրը:

Շատերը, ովքեր դեռ Թահիթիում չեն եղել, չգիտեն, որ մեր ափամերձ շրջանների ավազը սև է, ոչ թե՝ սպիտակ: Դա նրանից է, որ կղզին հրաբխային ծագում ունի և ժայռերի էրոզիայից ավազը սևանում է: Սակայն, ոտքերի տակ այն ճիշտ այնպիսին է, ինչպիսին՝ սպիտակ ավազը, վախենալու ոչինչ չկա:

Մենք՝ թահիթիցիներս, սիրում ենք լողալը, սերֆինգը, քանի որ խաղաղ օվկիանոսում մեծ ալիքներ հաճախ են լինում:

Մակույկ վարելը մեզ մոտ ազգային սպորտաձև է: Եվ այստեղ այնքան շատ ձկներ կան, քան՝ երկնքում ամպեր:

Quelle: Zeitschrift Wir Kinder, Ausgabe 09/2017, Fotos: privat, Fotolia.com – rakop_ton – msk.nina – panuruangjan – serge simo – kaiskynet

Լուսանկարը՝ animaflora – Fotolia.com

Էականը ննջեցյալների պարագայում - գլխավոր հարցեր

Հավատը անդրշիրիմյան աշխարհում փոփոխելիության և Աստծո ընդհանրական փրկության կամքի հանդեպ՝ սրանք են ննեցյալների վերաբերյալ Նորառաքելական եկեղեցու ուսմունքի երկու գլխավոր հարցերի պատասխանները ։

Մեր ներկայիս պրակտիկան ելնում է աստվածաշնչային տեքստից (տես՝community 04/2017), սակայն այն հաստատվում է նաև առաքյալների ծառայության հեղինակությամբ, որի առաջադրանքն է՝ Ավետարանը տեղին և ժամանակին մեկնաբանելը, տարածելը և քարոզելը:

Ննջեցյաների համար եկեղեցական խորհուրդների կիրառումը ոչ մի դեպքում չպետք է շփոթել ոգեհարցության հետ: Ոգեհարցության մեջ անդրշիրմյան աշխարհը ընկալվում է որպես այս աշխարհի մի մաս, որը կարելի է հետազոտել՝ ինչպես մի անհայտ աշխարհամասի:

Նոր կտակարանը և նրա վրա հիմված նորառաքելական հավատը շատ զուսպ է ննջեցյալների աշխարհի վերաբերյալ իր մեկնաբանություններում ։ Հատկապես, խոսք չի գնում այն մասին, որ պետք է պատկերացում ունենալ կամ կազմել անդրշիրմյան աշխարհի մասին: Խոսք չի գնում նաև անդրշիրիմյան աշխարհների վերաբերյալ գիտելիքների, մահացածների վիճակի և այլնի մասին: Ոչ մի դեպքում չպետք է նույնացնել այս և անդրշիրիմյան աշխարհները և այդ տրամադրվածության ներքո գտնվել: Մարդկային ոչ մի հետաքրքրասիրություն չպետք է բավարարվի, այլ՝ պետք է խոսվի փրկությունն ընդունելու մասին, որը հավասարապես վերաբերում է և ողջերին, և մահացածներին:

Այստեղ երկակի հարց է առաջանում. մեկը՝ ի՞նչ վիճակի մեջ են գտնվում մահացածները, և երկրորդը՝ ինչու՞ նրանք կարիք ունեն եկեղեցական խորհուրդների:

Ի՞նչ վիճակի մեջ են գտնվում մահացածները:

Առաջին հարցի պատասխանը կհաջողվի միայն այն դեպքում, եթե շեշտվի մահացածների և ողջերի միասնությունը: Մարդկային գոյության պատմությունը թեև ավարտվում է մահով, սակայն, այն մնում է որպես մահացածի մասնիկ, այսինքն՝ այն ամենը, ինչ նա մտածել է, ապրել կամ արել, հաջողված գործերն ու սխալմունքները պատկանում են նրան: Այսինքն՝ մարդու անհատականությունը մնում է մահի մեջ պահված: Ննջեցյալը անփոփոխելի է ու նա մնում է Աստծո կողմից ընդունված:

Անդրշիրիմյան աշխարհում հոգիների վիճակը արտահայտվում է Աստծոն մոտիկ կամ Աստծուց հեռու լինելու հանգամանքով: Բոլոր դեպքերում,մահով նրանք ոչ մի փոփոխության չեն ենթարկվում: Այն ննջեցյալները, ովքեր

Աստծուց հեռու են, կարիք ունեն առանձնահատուկ վերաբերմունքի, բարեխոսության: Ըստ նորառաքելական համոզմունքի՝ Սուրբ Հաղորդության նվիրաբերումը ննջեցյալին տանում է դեպի վիճակի փոփոխության: Այստեղ, իհարկե, չպետք է կարծել, որ այն ննջեցյալները, ովքեր նորառաքելական չեն եղել, նրանց նորից պետք է մկրտել կամ այն ննջեցյալներին, ովքեր կնքված են, պետք է նորառաքելական դարձնել:

Շատ քրիստոնյաների այն համոզմունքը, որ մարդն իր կյանքում Աստծո հանդեպ ընդունած դիրքորոշումը այլևս չի կարող փոխել և ոչ մի փոփոխություն այլևս հնարավոր չէ, քանի որ մահը նրան այդպիսին է ընդունել, նորառաքելական հավատի կողմից վիճարկվում է : Այս դիրքորոշման տեսանկյունից դժոխքով հավերժ պատժի կամ հավերժ անեծքի պատկերացումը ևս աննպատակ է: Յուրաքանչյուր դրական փոփոխության հիմքը այստեղ և այնտեղ, դա դարձն է դեպի Աստված, այսինքն՝ հավատը: Հետևաբար, մահացածները ևս չեն ազատվում հավատալու անհրաժեշտությունից : Հավատի հիմքն ու պահպանումը, որի արդյունքը Աստծո հետ նոր հարաբերությունն է, խորհուրդներն են, այսինքն՝ մկրտությունը, կնունքը և Սուրբ Հաղորդությունը:

Ինչու՞ են մահացածներին խորհուրդները նվիրաբերում

Ըստ նորառաքելական հավատի՝ քրիստոնյա լինելը հիմվում և ուժեղանում է խորհուրդների միջոցով: Սուրբ ջրով մկրտությունը մարդու համար անհրաժեշտ է որպես Աստծուն ,,այո,, ասելու նախապայման: Ուրեմն՝ ով ուզում է փկվել, ում հավատը պետք է ուժեղանա և պահպանվի, նա կարող է ընդունել խորհուրդները, որն ըստ նորառաքելական հասկացողության՝ հավասարապես վերաբերում է թե ողջերին, թե մահացածներին:

Նորառաքելական դավանաբանությունը / հոդված 8, 6, 3/ պարզաբանում է առաքյալների ծառայության նշանակությունը. ,, Հիսուսի առաջադրանքը՝ Ավետարանը տեղեկացնելը, մեղքերը ներելը և խորհուրդները նվիրաբերելը, իրականացնում են առաքյալները ինչպես ողջերի, այնպես էլ մահացածների համար: Նրանք գործում են Քրիստոսի փոխարեն և նրա անունով: Ինչպես Հիսուս Քրիստոսն իր զոհաբերությունը կատարեց երկրի վրա, այնպես էլ փրկության իրականացումը կատարվելու է առաքյալների միջոցով երկրի վրա: Քանի որ խորհուրդները միշտ իրենց տեսանելի կողմերն ունեն, նրանք կարող են իրականանալ միայն տեսանելի ոլորտում: Խորհուրդների ազդեցությունը որպես փրկության էական բաղադրիչ՝ հավասար է և ողջերի, և մահացածների համար:

Խմբագրական
Հրատարակիչ՝ Ժան-Լյուք Շնայդեր,
Իուբերլանդսթրասսե 243, 8051 Յուրիխ/ Շվեյցարիա
Ֆրիդրիխ Բիշոֆֆ հրատարակչություն ՍՊԸ,
Ֆրանկֆուրթեր սթրասսե 233,63263 Նոր- Իզենբուրգ / Գերմանիա
Խմբագիր՝ Փեթեր Յոհաննինգ

Ոգեհարցության և ննջեցյալների համար հավատքային գործողությունների միջև տարբերությունները

Բարեխոսություններ՝ ոգեհարցության փոխարեն, աստվածային գործեր՝ մարդկային հետաքրքրասիրության փոխարեն. ննջեցյալների պարագայում էական այս գործոնը ըստ նորառաքելական եկեղեցու՝ ոգեհարցության հետ ոչ մի կապ չունի:

Երբեմն կշտամբում են նորառաքելական եկեղեցուն, որ ննջեցյալների աշխարհի հանդեպ վերաբերմունքը որոշ նմանություն ունի ոգեհարցության պրակտիկային կամ պատկանում է ոգեհարցության պատկերացումների շրջանակին: Ստորև պետք է պարզ դառնա, որ ննջեցյալների աշխարհի հանդեպ վերաբերմունքը ոչ մի դեպքում չի նույնացվում ոգեհարցության հետ:

Ի՞նչ է ոգեհարցությունը:

Նախ անհրաժեշտ է պարզաբանել, թե ինչ է իսկապես ոգեհարցությունը: Ոգեհարցությունը ելնում է անդրշիրիմյան աշխարհի իրականությունից, որտեղ գտնվում են մահացածների հոգիները: Այս հիմնավորումը կա ոչ միայն ոգեհարցության մեջ, այլ նաև շատ կրոններում՝ և անցյալում և ներկայում : Նորառաքելական եկեղեցին ևս ելնում է անդրշիրիմյան աշխարհի գոյությունից, որտեղ գտնվում են մահացածների հոգիները: Այս հիմնավորումը, այնուամենայնիվ, ոգեհարցության տեսանկյունից ավելի է ծավալվում, երբ շեշտվում է ոչ միայն հոգիների գոյությունը, այլ նաև այն հնարավորությունը, որ նրանց հետ կարելի է, օրինակ, հաղորդակցական կապ հաստատել:

Աստվածաշնչյան օրինակներ

Մահացածներին ոգեհարցում անելը, որը ոգեհարցության էական մասերից է, հիշատակվում է դեռ Հին կտակարանում, քանի որ Իսրայելի հեթանոսական միջավայրում ոգեհարցությունը կրոնական պրակտիկայի մի մասն էր: Հին կտակարանում մահացածներին ոգեհարցնելը, ներառյալ նաև գուշակությունը, աստղաբաշխությունը և նմանատիպ այլ երևույթներ՝ որպես կռապաշտության ձևեր, մերժվում էին: Մովսեսի 5-րդ գրքի 18,9-12-ում, օրինակ, գրված է. ,, Եթե դու մտնես Տեր Աստծու քեզ տված երկիրը, չյուրացնես այդտեղ ապրող ազգերի գարշելի սովորությունները: Ձեր մեջ թող չգտնվի այնպիսի մեկը, որն իր տղային կամ աղջկան կրակի բովից անցկացնի, կախարդությամբ կամ գուշակությամբ զբաղվի, թռչուններին նայելով կանխագուշակումներ անի, մոգություններով զբաղվի, վհուկ կամ սուտ մարգարե լինի, ոգեհարցությամբ զբաղվի, որովհետև Տիրոջ համար պիղծ է նա, ով զբաղվում է այդպիսի բաներով, այդպիսի գարշելի բաների համար է, որ Տերը նրանց վերացնում է քո միջից,,:

Հայտնի է Այենդորի վհուկի մասին պատմությունը, ով Սավուղի խնդրանքով կանչեց Սամուել մարգարեի ոգուն /1. Սամուել 28,7-20/: Հին կտակարանային այս պատմությունը հաճախ է որպես ապացույց վերցրվում այն բանի համար, որ թեև մահացածներին ոգեհարցում կատարելն արգելված էր, բոլոր դեպքերում, դա հնարավոր էր և մարդկանց կողմից խրախուսվում էր: Սակայն, այս աստվածաշնչյան տեղեկությունը այն բանի համար չէ, որ հաստատվի մահացածներին ոգեհարցում անելը, այլ՝ այն պետք է հաստատի, թե Աստծուց ինչքան հեռու էր Սավուղը : Մարգարեն այստեղ միայն այն բանի համար է հայտնվում, որպեսզի ասի, որ թագավորը մերժված է:

Ժամանակակից ոգեհարցություն

Ժամանակի ընթացքում, հենց 17-րդ դարի վերջերից, այսինքն՝ լուսավորության դարաշրջանից սկսած՝ այն պատկերացումը, որ կարելի է ոգիների և մահացածների հետ կապի մեջ մտնել, որպես սնահավատություն դիտարկվեց: Միայն 19-րդ դարում, երբ չէին ուզում այլևս լուսավորության ռացիոնալիզմի ամեն մի տեսակետին հետևել, նորից անդրադարձան այդ պրակտիկային:

19-րդ դարում ծագեց նոր ոգեհարցությունը: Սակայն, երբ առաջ ոգիներին և մահացածներին ոգեհարցում

անելը հաճախ պատկանում էր կրոնական պրակտիկային, ժամանակակից ոգեհարցությունը չպետք է անպայման հստակ կրոնական կապ ունենար: Փորձում էին միաժամանակ համակարգված և գրեթե գիտականորեն ձևով կապ հաստատել ոգիների և մահացածների հետ, որպեսզի ապացուցեն ոչ միայն մահից հետո կյանքի շարունակականությունը, այլ՝ նաև անդրշիրիմյան աշխարհի գոյությունը, որով փորձում էին տեղեկություն ստանալ: Օրինակ, մահացածներին հարցնում են, թե ինչպիսի վիճակում են նրանք գտնվում և ինչպիսին է անդրշիրիմյան աշխարհը:

Ոգեհարցությունն ուզում է մահացածներին ոգեհարցնելու միջոցով ապացուցել անդրշրիրմյան աշխարհի կամ անմահ հոգիների գոյությունը: Նրանք ավելի շատ մարդկային հետաքրքրասիրության առարկա են դառնում: Բացի այդ, այս և այն աշխարհների, արձագանքների և մեկնաբանությունների հակադրությունը այլևս լուրջ չի ընդունում: Ավելին, անդրշիրմյան աշխարհը ընկալվում է որպես այս աշխարհի անտեսանելի ձև, որտեղ գործում են նույն օրինաչափությունները, ինչպիսիք՝ նյութական աշխարհում:

Հաճախ ոգեհարցությունը հասկացվում է որպես երկընտրանք քրիստոնեության, որով պնդվում է, որ այն պարուրված է դոգմաներով և բավարար չի լինի անդրշիրմյան աշխարհով զբաղվելու:

Ննջեցյալների համար կատարվող հավատքային գործերը կապ ունե՞ն ոգեհարցության հետ:

Ինչպես պետք է գնահատել այն կշտամբանքը, որ ննջեցյալների համար հավատքային գործերի կատարումը ոգեհարցության մի ձև է կամ ամենաքիչը նրա հետ կապ ունի: Մինչ ոգեհարցության դեպքում կանչում են մահացածների հոգիներին, որպեսզի նրանցից ինչ-որ բան իմանան, ննջեցյալների համար հավատքային խորհուրդների կատարման դեպքում ոչ մի փորձ չի արվում ննջեցյալների հետ կապ հաստատելու, որպեսզի ինչ-որ բան նրանց մասին կամ անդրշիրիմյան աշխարհի մասին տեղեկանան: Այսինքն՝ ննջեցյալները մարդկային հետաքրքրասիրության կամ գիտական փորձի առարկաներ չեն: Անդրշիրմյան աշխարհը չի դիտարկվում նաև այս աշխարհի անտեսանելի մաս, որը պետք է գիտականորեն հետազոտվի, այլ՝այն պետք է հանգիստ թողնել իր յուրահատկությամբ և անբացահայտելիությամբ:

Ննջեցյալների հանդեպ առկա գործում խոսքը գնում է միայն մի բանի մասին, հատկապես այն մասին, որ մահացածներին նվիրաբերվում են խորհուրդները, որոնք անհրաժեշտ են փրկության համար: Այստեղ ոչ թե մարդիկ են գործում՝ իրենց նախաձեռնությամբ և անդրշիրիկյան աշխարհի նկատմամբ առանձնահատուկ հետաքրքրությամբ, այլ Աստված ինքն է ծառայում մարդկանց, այսինքն՝ առաքյալներին, որ մահացածների հոգիների համար խորհուրդների նվիրաբերումը հնարավոր դառնա: Թե ով է ննջեցյալներից ընդունում խորհուրդները, ով է մասնակցում կամ չի մասնակցում փրկությանը, մնում է գաղտնի:

ՆՆջեցյալների համար հավատքային գործերի կատարումը ոչ այլ ինչ է, քան՝ Աստծո փրկության պլանի ընդհանրականություն, որն ընդգրկում է և մահացածներին և ողջերին: Ննջեցյալների համար արվող այդ գործերում ննջեցյալների հետ կապը ոչ մի դեր չի խաղում, ավելին, պետք է բարեխոսություն կատարվի, որով պետք Աստծուն խնդրել, որ ողորմած լինի չփրկվածների հանդեպ: Այդ աղոթքների և մարդկանց հանդեպ սիրալիր պահվածքի միջոցով մենք Աստծուն ցույց կտանք, որ մենք ոչ միայն մեր կամ ողջերի փրկության համար ենք հոգում, այլ նաև՝ մահացածների փրկության: Դրանով կարտահայտվի նաև այն գիտակցությունը, որ ողջերն ու մահացածները փրկության կարիք ունեցողների մի մեծ միաբանություն են կազմում, և, որ Քրիստոսի եկեղեցին ինքը ևս ողջերի և մահացածների միասնություն է:

Լուսանկար

Տեղեկացում

07.01.2018	Բանջուլ (Գամբիա)
14.01.2018	Քյոլն (Գերմանիա)
19.01.2018	Լահորե (Պակիստան)
21.01.2018	Կարաչի (Պակիստան)
11.02.2018	Լանդքվարտ (Շվեյցարիա)
18.02.2018	Քեյփթաուն (Հարավային Աֆրիկա)
25.02.2018	Դիբուրգ (Գերմանիա)
28.02.2018	Յաոունդե (Քամերուն)
02.03.2018	Բաթա (Հասարակածային Գվինեա)
04.03.2018	Լիբրեվիլլե (Գաբուն)
18.03.2018	Բուենոս Այրես (Արգենտինա)
19.03.2018	Ռոսարիո (Արգենտինա)
24.03.2018	Օկնա Մուրես (Ռումինիա)
25.03.2018	Բաիա Մարե (ումինիա)
30.03.2018	Գոթբուս (Գերմանիա)

New Apostolic Church
International